

Հավելված
Արցախի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2019 թվականի փետրվարի 28-ի N 3-Ա որոշման

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2019

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը գործում է «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին», «Փոստային կապի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին», «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքների և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի հիման վրա:

Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը (այսուհետ՝ նաև՝ Հանձնաժողով) Էներգետիկայի (Էլեկտրաէներգետիկա, ջերմամատակարարում, գազամատակարարում), հեռահաղորդակցության (Էլեկտրոնային հաղորդակցության), հեռուստատեսության և ռադիոյի, տնտեսական մրցակցության պաշտպանության, փոստային կապի (ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների մասով) բնագավառներում և ջրային համակարգում (խմելու, ոռոգման, արդյունաբերական ջրի մատակարարում, ջրահեռացում և կեղտաջրերի մաքրում) կարգավորում է իրականացնում իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

2018 թվականի ընթացքում գումարվել է Հանձնաժողովի 18 նիստ: Ընդունվել է 79 որոշում՝ 17 նորմատիվ և 62 անհատական:

Հանձնաժողովի կողմից հաշվետու ժամանակահատվածում լիցենզավորվել է 17 սուբյեկտ, այդ թվում՝ հաշվառման վերցվել ինը նոր սուբյեկտ: 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվառման վերցված ընկերությունների ընդհանուր թիվը կազմել է 53:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովում գրանցվել է Էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց միջև կնքված 14 պայմանագիր:

Հանձնաժողովի նախագահի կողմից արձակվել է ստուգումների և մոնիթորինգների իրականացման 249 հրաման (հանձնարարագիր):

Հանձնաժողովի անդամների, ստորաբաժանումների պատասխանատուների մասնակցությամբ մշակվել, ընթացքավորվել է 1095 գրություն, որից՝ 569 մտից և 526 էլից:

Ստորագրվել է կադրային, գործառնական ու կազմակերպչական բնույթի 173 հրաման, որից՝ 56-ը՝ Հանձնաժողովի նախագահի, 117-ը՝ աշխատակազմի ղեկավարի:

Հանձնաժողովի աշխատակիցները, ծառայողական պարտականությունների կատարման անհրաժեշտությամբ պայմանավորված, համագործակցության և աշխատանքային ծրագրերի շրջանակներում գործուղվել են 88 անգամ, այդ թվում՝ Արցախի Հանրապետության շրջաններ՝ 58, Հայաստանի Հանրապետության համապատասխան հանձնաժողովներ՝ 28 և արտերկիր (Հունգարիա)՝ 2 անգամ:

«Քաղաքացիական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի համապատասխան կատարվել են՝

- քաղաքացիական ծառայողների անձնական գործերի վարում և ստուգում, աշխատանքային ստաժի հաշվարկ, քաղաքացիական ծառայողների հիմնական աշխատավարձերի բնականոն աճի վերահսկողություն, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի հաստատում և մուտքագրում էլեկտրոնային ծրագիր,

- աշխատակազմի քաղաքացիական ծառայողների՝ վերապատրաստման դասընթացների մասնակցության ապահովում, ատեստավորման գործընթացի և թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթների կազմակերպում:

Հանձնաժողովի պաշտոնական վեբ-կայքում (www.kargavorum.nkr.am) տեղադրվել է Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ 31 հայտարարություն և 139

նորություն, 34 հարց ու պատասխան, 211 արդիական թեմա, 206 հետաքրքիր նյութ, 29 հոդված, 8 նոր տեսանյութ:

Հաշվետու ժամանակահատվածում վեբ-կայքի այցելությունների ընդհանուր թիվը կազմել է 16000՝ նախորդ տարվա 9576-ի փոխարեն:

Հանձնաժողովի գործունեությունը լուսաբանվել է Արցախի հանրային հեռուստա-ռադիոընկերության, «Ազատ Արցախ» հանրապետական թերթի, «Ստեփանակերտ» շաբաթաթերթի և «Արցախպրես» լրատվական գործակալության կողմից:

Հայաստանի Հանրապետության գործընկեր հանձնաժողովների հետ համատեղ նիստերը լուսաբանվել են «h1», «h2», «Շանթ», «Արմենիա», «Կենտրոն» հեռուստա-ալիքներով և «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթով:

Ապահովվել է ինը զանգվածային լրատվամիջոցների և հինգ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը Հանձնաժողովի նիստերին:

Հանձնաժողովի թեժ գծի և ֆեյսբուքյան էջի միջոցով ընդունվել է 13 դիմում-բողոք, որոնք ընթացքավորվել են օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Էներգետիկայի բնագավառում իրականացվել են էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց ֆինանսական հաշվետվությունների և տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունների վերլուծություն, լիցենզավորված գործունեության իրականացման պայմանների վերահսկում, սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունների ամփոփում և բազայի համալրում:

Հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության 14 լիցենզիա՝

- «**ԼԵՎ ԷՆԵՐՋԻ**» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Աղավնո» փոքր հիդրոէլեկտրակայանի համար,

- «**Հիմնաքար**» փակ բաժնետիրական ընկերությանը «Բերդիկ» փոքր հիդրոէլեկտրակայանի համար,

- «**ԱրցախՀԷԿ**» բաց բաժնետիրական ընկերությանը «Թրդի-4» փոքր հիդրոէլեկտրակայանի համար,

- «**Էներգո Գրուպ**» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Կայծաղբյուր» փոքր հիդրոէլեկտրակայան-1-ի, «Կայծաղբյուր» փոքր հիդրոէլեկտրակայան 2-ի և «Կայծաղբյուր» փոքր հիդրոէլեկտրակայան 3-ի համար,

- «**ԼԻՄԵՍՏՈՆ**» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Եղեգնուտ-1» փոքր հիդրոէլեկտրակայանի համար,

- «**ԷՆԵՐԳՈ-ՍԹԱՐ**» փակ բաժնետիրական ընկերությանը «Հոչանց-3» փոքր հիդրոէլեկտրակայանի համար,

- «**ԷԼԻՏ ՀԻՂՐՈ**» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ԷԼԻՏ» փոքր հիդրոէլեկտրակայանի համար,

- «**ՀՈՉԱՆՑ**» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ՀԱԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի համար,

- «**Ռիվեր Էներջի**» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ռիվեր Էներջի» փոքր հիդրոէլեկտրակայանի համար,

- «**Մ. ԷՆԵՐԳՈ Լ**» փակ բաժնետիրական ընկերությանը «ՄԻՈՒԹՅՈՒՆ» փոքր հիդրոէլեկտրակայանի համար,

- «**ՄՈՒՎ**» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ՄՈՒՎ» փոքր հիդրոէլեկտրակայանի համար,

- «**ԹԱՐԹԱՌ ԷՆԵՐՋԻ ԻՆՎԵՍ**» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ԳԵՏԱՎԱՆ» փոքր հիդրոէլեկտրակայանի համար:

2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ Արցախի Հանրապետությունում գործում են «Սարսանգ» հիդրոէլեկտրակայանը և 21 փոքր հիդրոէլեկտրակայան, կառուցման փուլում է գտնվում 16 փոքր հիդրոէլեկտրակայան:

Լիցենզիայի պայմանների կատարման վերահսկման նպատակով 2018 թվականին իրականացվել են դիտանցումներ Արցախի Հանրապետությունում գործող 18 արտադրող և 16 կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայաններում: Արտադրող փոքր հիդրոէլեկտրակայաններում արձանագրվել են էլեկտրական էներգիայի (հզորության) օգտակար առաքման քանակները, իսկ կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայաններում՝ կատարված շինարարական աշխատանքների ծավալները և գործարար ծրագրով նախատեսված ընդհանուր նախահաշիվները:

Հաշվետու տարում Հանձնաժողովի կողմից հաստատվել է էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց գործունեության մոնիթորինգի իրականացման կարգը: Լրամշակվել են Արցախի Հանրապետության էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգը, ինչպես նաև «Արցախէներգո» և «Արցախգազ» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման կարգերը:

Սահմանվել են բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները, ինչպես նաև բնական գազի մատակարարման մատակարար-բաժանորդ (բնակիչ) և մատակարար-բաժանորդ (կազմակերպություն) պայմանագրերի օրինակելի ձևերը:

Սահմանվել են նաև «Արցախգազ» փակ բաժնետիրական ընկերության կողմից բնակչության ներտնային և բազմաբնակարան շենքերում գտնվող կազմակերպությունների գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայության վճարը և մի շարք փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները:

Ջրային համակարգում իրականացվել են կարգավորվող անձանց կողմից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների, տեխնիկատնտեսական և ծառայությունների մատուցման որակի ցուցանիշների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունների վերլուծություններ, կարգավորվող անձանց թույլտվության պայմանների կատարման հսկողություն:

Երկարաձգվել են «Ջրմուղ-կոյուղի» և «Ջրային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերությունների ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունների գործողության ժամկետները: Դադարեցվել է «Ջրամատակարարում և ջրահեռացում» փակ բաժնետիրական ընկերության ջրային համակարգի օգտագործման թույլտվության գործողությունը (2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 73-Ա որոշմամբ):

2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ ջրային համակարգում գործում է երեք ընկերություն՝ «Ջրմուղ-կոյուղի», «Բարեկարգում» և «Ջրային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերությունները:

Ներկայացվել են առաջարկություններ «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:

Տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառում կատարվել է «Տեխնոսերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացրած ֆինանսական հաշվետվությունների համեմատական վերլուծություն:

Հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), հեռուստատեսության և ռադիոյի ու փոստային կապի բնագավառներ.

Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում 2018 թվականի ընթացքում տրամադրվել է ռադիոկապի շարժական ցանցի կազմակերպման համար ռադիոհաճախականության օգտագործման մեկ թույլտվություն «Տաքսի Նիկո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, ուժը կորցրած է ճանաչվել ռադիոհաճախականությունների օգտագործման երեք թույլտվություն: Ընդունվել է առանց համապատասխան թույլտվության ռադիոհաճախականությունների օգտագործման դադարեցման վերաբերյալ երկու որոշում:

2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում գործունեություն են ծավալում լիցենզավորված մեկ ընկերություն և ռադիոհաճախությունների օգտագործման թույլտվություն ստացած տասը ընկերություն:

Հանձնաժողովի և «Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության միջև մի քանի փուլերով ընթացած քննարկումների ու բանակցությունների արդյունքում հաշվետու ժամանակահատվածում հաստատվել են ընկերության կողմից մատուցվող մի շարք ծառայությունների նոր՝ նվազեցված սակագներ.

- հետվճարային համարների բաժանորդավճար ծառայության սակագինը նվազել է 50 տոկոսով,

- բջջային կապի հետվճարային և կանխավճարային ծառայությունների ու կարճ հաղորդագրության (SMS) ծառայությունների սակագները նվազել են միջինը 19,5 տոկոսով,

- անշարժ և անլար ֆիքսված միջերես համակարգերով հեռախոսակապի ծառայությունների սակագները նվազել են միջինը 5,1 տոկոսով,

- տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների՝ Wi-Fi երթուղիչների միջոցով ինտերնետ ծառայությունների և DSL մոդեմով ինտերնետ ծառայությունների սակագները նվազել են միջինը 5,3 տոկոսով:

- հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական ինտերնետ ծառայության հետվճարային քարտի սակագնային պլաններում ընդգրկված ծավալի սպառումից հետո յուրաքանչյուր ՄԲ-ի համար հաստատվել է 10 տոկոսով նվազեցված սակագին:

Հաստատվել է «Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող կարգավորման ենթակա հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների համար Հանձնաժողովի կողմից սահմանված առավելագույն սակագներից ցածր սակագների կիրառման կարգ:

Կատարվել են «Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված սակագների վերանայման հայտերի և հրապարակային առաջարկների ուսումնասիրություններ:

Մշակվել է «էլեկտրոնային հաղորդակցության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ օրենքի նախագիծ, որը հնարավորություն կտա Հանձնաժողովին օրինական դաշտ բերելու առանց համապատասխան թույլտվության ռադիոհաճախականություն օգտագործող սուբյեկտներին՝ հստակ սահմանված տույժ, տուգանքների կիրառմամբ:

Հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում հայտարարվել է ընդհանուր ուղղվածության ռադիոհաղորդումների եթերային հեռարձակման (վերահեռարձակման) լիցենզավորման երեք մրցույթ, որոնց արդյունքում լիցենզիա է տրամադրվել «Դիջիթալ Սմայլ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ Արցախի Հանրապետության Ստեփանակերտի և մեկ կամ մի քանի շրջանների տարածքում, և «Փեյս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ Արցախի Հանրապետության Հաղրուփի և Մարտունու շրջանների տարածքում, ռադիոհաղորդումների եթերային հեռարձակման (վերահեռարձակման) գործունեություն իրականացնելու համար:

2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում ռադիոհաղորդումների հեռարձակման (վերահեռարձակման) գործունեությամբ զբաղվում է 11, իսկ հեռուստածրագրերի հեռարձակմամբ (վերահեռարձակմամբ)՝ չորս ընկերություն՝ երկուսը՝ եթերային և երկուսը՝ կաբելային: Արցախի Հանրապետությունում գործում է հանրային հեռուստառադիոընկերություն:

Ուսումնասիրվել և վերլուծվել են ռադիոընկերությունների կողմից ներկայացվող ռադիոհաղորդումների գրանցամատյանների ամենամսյա տվյալները: Իրականացվել է հինգ լիցենզավորված ռադիոընկերությունների եթերների ընտրանքային մշտադիտարկում: Արցախի Հանրապետության շրջաններում պարբերաբար իրականացվել են լիցենզավորված ռադիոընկերություններին հատկացված ռադիոհաճախականություններով հեռարձակվող եթերների հասանելիության մոնիթորինգներ:

Կատարվել են 2019 թվականի ռադիոհաճախականության օգտագործման (տարեկան) պարտադիր վճարների վերաբերյալ մի շարք վերլուծական աշխատանքներ,

Արցախի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների տարեկան և եռամսյակային գումարների հաշվարկներ:

Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի համագործակցության շրջանակում Հանձնաժողովի աշխատակիցները մասնակցել են Երևանի ավագանու արտահերթ ընտրությունների և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության լուսաբանման գործընթացների մշտադիտարկմանը:

Էլեկտրոնային հաղորդակցության, հեռուստատեսության և ռադիոյի ու **փոստային կապի** բնագավառներում հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող տարեկան և կիսամյակային ֆինանսական հաշվետվությունների, հանրային շարժական բջջային կապի, տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող անձանց կողմից ներկայացվող եռամսյակային և հեռախոսաֆիկացման վերաբերյալ ներկայացվող կիսամյակային հաշվետվությունների վերլուծություններ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում 2018 թվականի ընթացքում իրականացվել են մի շարք աշխատանքներ՝ ուղղված առաջին անհրաժեշտության ապրանքների մանրածախ գների մոնիթորինգների իրականացմանը, անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտմանը, ապրանքային շուկաների կառուցվածքի և գնագոյացման մեխանիզմների ուսումնասիրությանը, գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների բացահայտմանը և նրանց կողմից ներկայացված տեղեկատվությունների վերլուծությանը, ինչպես նաև մի շարք այլ աշխատանքներ՝ ուղղված տնտեսական մրցակցային միջավայրի ապահովմանը:

Մանրածախ գների մոնիթորինգ.

Գների դիտանցումը հանդիսանում է Հանձնաժողովի կողմից ապրանքային շուկաներում գների փոփոխությանը հետևելու լծակ: Առաջին անհրաժեշտության ապրանքների նկատմամբ Հանձնաժողովի կողմից տարվա ընթացքում ցուցաբերված մշտական ուշադրության արդյունքում հնարավորություն է ստեղծվում որոշակիորեն զսպելու գների արհեստական բարձրացման միտումները, ինչպես նաև կանխելու գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների կողմից չիմնավորված գների սահմանումը:

Տարեսկզբից ընդլայնվել է Հանձնաժողովի կողմից դիտանցվող մի շարք լայն սպառման ապրանքատեսակների ցանկը:

Հաշվետու ժամանակահատվածում Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում իրականացվել է պարենային և ոչ պարենային 43 ապրանքային շուկաների 80 ապրանքատեսակների մանրածախ գների 158 մոնիթորինգ 30 առևտրային օբյեկտում, կատարվել դրանց արդյունքների վերլուծություն:

Ընդհանուր առմամբ ուսումնասիրված 80 ապրանքատեսակներից միջին գների անկում արձանագրվել է 28, գնաճ՝ 13 ապրանքատեսակների համար: Մնացած 39 ապրանքատեսակների միջին գները մնացել են անփոփոխ կամ տատանվել են 2 տոկոսի միջակայքում: Գերիշխող դիրք ունեցող ընկերությունների կողմից իրացվող ապրանքատեսակներից գնանկում արձանագրվել է սեղմված գազի համար՝ 30 դրամ կամ 12 տոկոս, և բենզինի համար՝ 10 դրամ կամ 2,1 տոկոս, իսկ գնաճ՝ դիզվառելիքի համար՝ 10 դրամ կամ 2,1 տոկոս, և գազավորված քաղցրացված ըմպելիքի համար՝ 20 դրամ կամ 4,4 տոկոս:

Իրացման գների ձևավորման մեխանիզմներն ուսումնասիրելու և չիմնավորված գների կիրառումը բացառելու նպատակով նշված ժամանակահատվածում իրականացվել են ուսումնասիրություններ «Զու», «Պանիր», «Դիզվառելիք» ապրանքային շուկաներում, ինչպես նաև ծաղիկների, գրենական պիտույքների և հազուստի շրջանառության

ուլորտներում: Ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ արձանագրված գնային փոփոխությունները պայմանավորված էին տնտեսական պայմանների (գործոնների) փոփոխությամբ և սեզոնայնությամբ:

Անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտում.

Ստեփանակերտ քաղաքում իրականացվել է անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտման նպատակով 158 դիտանցում: Դիտանցումների ընթացքում ուսումնասիրվել են մանրածախ առևտրի ոլորտում իրացվող ապրանքների վրա մատնանշվող տեղեկությունների արժանահավատությունը, օրենսդրության պահանջների համապատասխանությունը, ինչպես նաև հնարավոր մոլորեցման հետ կապված խնդիրները:

Հաշվի առնելով, որ տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող զեղչերը հաճախ առաջացնում են կամ կարող են առաջացնել անբարեխիղճ մրցակցության դրսևորման երևույթներ, Հանձնաժողովի նախաձեռնությամբ մշակվել է «Ձեղչերի ներկայացման և իրականացման գործընթացում անբարեխիղճ մրցակցության երևույթները բացառելու վերաբերյալ» ուղեցույց: Կազմակերպվել է սեմինար-խորհրդակցություն երկու տասնյակից ավելի տնտեսավարող սուբյեկտների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Ուղեցույցի վերաբերյալ պատրաստվել են բուկլետներ և բաժանվել տնտեսավարող սուբյեկտներին:

Ապրանքային շուկաների կառուցվածքի ուսումնասիրություն.

Հաշվի առնելով գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների կողմից պարբերաբար ներկայացվող տեղեկատվության վերլուծությունները, որոնց արդյունքում բացահայտվել են որոշ շուկաներում տեղի ունեցած կառուցվածքային փոփոխություններ, ինչպես նաև մի շարք շուկաների ուսումնասիրության վաղեմությունը, տարվա ընթացքում իրականացվել են «Օղի», «Գինի», «Ձեթ», «Սեղմված գազ», ինչպես նաև կաթնամթերքի և դեղերի շրջանառության ոլորտների ապրանքային շուկաների կառուցվածքների ուսումնասիրություններ՝ պարզելու նշված շուկաների մրցակցային դինամիկան, գերիշխող դիրք ունեցող ընկերությունների մասնաբաժնի փոփոխությունը և շուկայում առկա մրցակցային խնդիրները:

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքում մի շարք շուկաներում մրցակցային ցուցանիշների բարելավում է արձանագրվել, մասնավորապես՝ կենտրոնացվածության աստիճանի և գերիշխող սուբյեկտների մասնաբաժնի նվազում, ինչպես նաև շուկաներում գործող սուբյեկտների թվի և իրացման ծավալների աճ:

Նվազել է գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների քանակը՝ դեղերի շուկայից՝ հինգ, մանրածախ առևտրի ոլորտից՝ մեկ տնտեսավարող սուբյեկտով: Արդյունքում 48 ապրանքային շուկայում ներկայումս առկա է 21 գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտ:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են նաև պետական մարմինների կողմից ձեռքբերվող մի շարք ապրանքների և ծառայությունների շուկաներ, մասնավորապես՝ «Տպագրական աշխատանքներ», «Գրենական պիտույքներ և նյութեր», «Համակարգչային և պատճենահանման սարքավորումներ, օժանդակ նյութեր, քարտրիջներ և տոներներ», «Կահույք», «Էլեկտրատեխնիկա, ռադիոտեխնիկա և կենցաղային տեխնիկա», «Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկում» և «Տրանսպորտային փոխադրումներ» ապրանքային շուկաները և շուկաներում գործող ու պետական գնումներին մասնակցելու համար շրջանակային համաձայնագրեր կնքած տնտեսավարող սուբյեկտները:

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ նշված շուկաներում բացակայում են մենաշնորհ դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտներ, և առկա է մրցակցություն՝ պայմանավորված շուկաներում գործող տնտեսավարող սուբյեկտների քանակով:

Արցախի Հանրապետության շրջաններում կատարված աշխատանքներ.

Մրցակցային միջավայրի զարգացումը խրախուսելու նպատակով դիտանցումներ են իրականացվել նաև Արցախի Հանրապետության Մարտունի, Մարտակերտ, Հադրութ, Բերձոր, Ասկերան, Շուշի և Քարվաճառ քաղաքներում:

Շրջկենտրոններում կատարված մոնիթորինգների արդյունքում իրականացվել են համեմատական վերլուծություններ ինչպես նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի, այնպես էլ Ստեփանակերտ քաղաքի համեմատ: Տարվա կտրվածքով, համաձայն իրականացված վերլուծությունների, դիտարկված միևնույն ապրանքատեսակների համար բոլոր շրջկենտրոններում ուսումնասիրված ապրանքների միջին գների մակարդակը 2017 թվականի դեկտեմբեր ամսվա համեմատ նվազել է, մասնավորապես՝ Բերձոր քաղաքում՝ 0,8 տոկոս, Հադրութ քաղաքում՝ 2,0 տոկոս, Մարտակերտ քաղաքում՝ 3,4 տոկոս, Մարտունի քաղաքում՝ 2,7 տոկոս, Շուշի քաղաքում՝ 2,4 տոկոս և Ասկերան քաղաքում՝ 3,9 տոկոս: Նույն ժամանակահատվածում Ստեփանակերտ քաղաքում նշված ապրանքների միջին գները նվազել են 2,5 տոկոսով: Նշվածից հետևում է, որ Արցախի Հանրապետության շրջաններում մանրածախ առևտրի ոլորտը մրցակցային է, քանի որ Ստեփանակերտում և շրջաններում արձանագրված գների դինամիկան համապատասխանում են:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2018 թվականին շարունակվել է սերտ համագործակցությունը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի հետ: Իրականացվել են զգալի աշխատանքներ համագործակցության հուշագրերով և համատեղ աշխատանքային ծրագրերով նախանշված ուղղություններով՝ միտված հանձնաժողովների միջև տեղեկատվության փոխանակմանը, փոխադարձ այցելությունների միջոցով միջազգային փորձի ուսումնասիրություններին և օրենսդրական դաշտի ներդաշնակեցմանը:

Համագործակցության շրջանակներում Հանձնաժողովի 28 աշխատակից գործուղվել է Հայաստանի Հանրապետության կարգավորող հանձնաժողովներ: Նրանցից երկուսը մասնակցել են արտասահմանում կազմակերպված համաժողովների և սեմինարների, այդ թվում՝

- Հայաստանի Հանրապետությունում անցկացվող «Եվրասիական շաբաթ» միջազգային գործարար ֆորումի շրջանակներում նախատեսված Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մրցակցության և հակամենաշնորհային քաղաքականության հարցերով բլոկի հանրային ընդունարանի արտագնա միստին,

- «Մերիդիան» էքսպո կենտրոնում «Գնումների միստեր» միջոցառմանը, որտեղ Արցախի Հանրապետության որոշ արտադրող ընկերություններ ներկայացրել են իրենց ապրանքները մի շարք առևտրային ցանցերի,

- Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում կազմակերպված «Հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերման գործիքներ» և «Մրցակցության մասին օրենքի հիմնարար հասկացությունները և ընթացակարգերը» թեմաներով սեմինար-դասընթացներին:

2018 թվականին Ստեփանակերտում տեղի է ունեցել երկու համատեղ միստ՝ Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Համագործակցության համաձայնագրերով և համատեղ աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումները հիմնականում իրականացվել են:

Արդյունավետ համագործակցություն է ծավալվել Արցախի Հանրապետության արդարադատության, Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների, ֆինանսների նախարարությունների, ազգային վիճակագրական ծառայության, ինչպես նաև շահագրգիռ այլ պետական մարմինների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արհեստակցական միությունների ֆեդերացիայի և այլ հասարակական կազմակերպությունների հետ:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու ժամանակահատվածում կարգավորման պարտադիր վճար վճարող 22 սուբյեկտների համար հաշվարկվել են կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը և համապատասխան տեղեկանքներ են ուղարկվել կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց ու վերահսկող մարմնին:

2018 թվականի ընթացքում պետական բյուջե է մուտքագրվել 1 011 123,9 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներ՝ 172444,7 հազար ՀՀ դրամ, պետական տուրք՝ 22069,0 հազար ՀՀ դրամ, ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարներ՝ 816610,2 հազար ՀՀ դրամ:

Հանձնաժողովն օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացրել է ամսական, եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվություններ:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ